



ԱՆՎԱՆ ԱՈՒՂԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄոբիԴրամ» ՓԲԸ բաժնետիրոջը

Մեր կողմից իրականացվել է «ՄոբիԴրամ» ՓԲԸ (այսուհետև՝ Ընկերություն) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում, այդ հաշվետվությունները ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՄոբիԴրամ» ՓԲԸ ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Տնօրեն

Արտոնատ

Երևան,

07 մայիսի 2014թ.



A handwritten signature in blue ink, appearing to be 'Ա. Ա. Արմենիա'.

Արթուր Անդրեասյան

Սիրական Մշեցյան

ՄոբիԴրամ ՓԲԸ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
Հասույթ, այդ թվում՝			
Կոմունալ վճարումներ	5	42,817	22,778
Արտաքին վճարումներ		4,392	-
Միջազգային դրամական փոխանցումներ		389	863
Էլեկտրոնային փողեր		141	14
Այլ		928	902
Ընդամենը հասույթ		48,667	24,557
Գործառնական ծախսեր, այդ թվում՝			
Անձնակազմի գծով ծախսեր		(79,851)	(78,033)
Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր	6	(22,820)	(8,243)
Ծրագրի սպասարկման ծախսեր		(21,042)	-
Աուդիտի և խորհրդատվության ծախսեր		(5,881)	(9,742)
Այլ գործառնական ծախսեր	7	(20,154)	(15,687)
Ընդամենը գործառնական ծախսեր		(149,748)	(111,705)
Գործառնական վնաս		(101,081)	(87,148)
Ֆինանսական եկամուտ	8	3,329	4,500
Ֆինանսական ծախսեր	8	(21,668)	(9,561)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (վնաս)		(1,405)	2,686
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ <i>վնաս հարկումից առաջ</i>		(234)	382
		(121,059)	(89,141)
Շահութահարկի գծով փոխհատուցում	9	22,415	18,365
Տարվա վնաս		(98,644)	(70,776)
<i>Այլ համապարփակ եկամուտ հաշվետու տարվա համար (զուտ հարկերից)</i>		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(98,644)	(70,776)

Սևազ Քազանջյան, գործադիր տնօրեն

Վահե Հակոբջանյան, գլխավոր հաշվապահ



ՍոբիՂրամ ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծան.	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
<i>Ակտիվներ</i>			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	10	59,410	58,769
Ոչ նյութական ակտիվներ	11	193,655	26,989
Հետաձգված հարկային ակտիվներ	12	30,450	14,442
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		310	-
		<u>283,825</u>	<u>100,200</u>
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ		3,421	3,254
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	6,207	3,381
Բանկային ավանդներ		-	1,383
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	209,793	294,943
		<u>219,421</u>	<u>302,961</u>
		<u>503,246</u>	<u>403,161</u>
<i>Ընդամենը ակտիվներ</i>			
<i>Պարտավորություններ</i>			
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	64,148	47,252
		<u>64,148</u>	<u>47,252</u>
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Փոխառություններ	16	182,578	220,997
		<u>182,578</u>	<u>220,997</u>
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնեմասային կապիտալ	17	383,000	190,000
Լրացուցիչ կապիտալ		49,534	22,282
Կուտակված վնաս		(176,014)	(77,370)
<i>Ընդամենը սեփական կապիտալ</i>		<u>256,520</u>	<u>134,912</u>
<i>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</i>		<u>503,246</u>	<u>403,161</u>

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 5 - 8) հաստատվել են Ընկերության մասնակցի կողմից 07.05.2014թ. և թույլատրվել հրապարակման համար, ստորագրությամբ՝

Սևազ Քազանջյան, գործադիր տնօրեն

Վահե Հակոբջանյան, գլխավոր հաշվապահ



ՄոբիԴրամ ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծան.	2013թ. հազ. դրամ	2012թ. հազ. դրամ
<u>Գործառնական գործունեություն</u>			
Տարվա վնաս		(98,644)	(70,776)
Ճշգրտումներ՝			
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում		22,820	8,243
Շահութահարկի գծով փոխհատուցում		(22,415)	(18,365)
Ֆինանսական եկամուտ		(3,329)	(4,500)
Ֆինանսական ծախսեր		21,668	9,561
Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս (օգուտ)		1,405	(2,686)
Գործառնական վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները		(78,495)	(78,523)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն		(2,823)	(3,377)
Պաշարների փոփոխություն		(168)	(3,164)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն		16,729	45,802
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ		(64,757)	(39,262)
Վճարված շահութահարկ		(227)	-
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(64,984)	(39,262)
<u>Ներդրումային գործունեություն</u>			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերում		(27,128)	(59,870)
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար (Ներդրումներ) / ավանդների մարումներ		(310)	-
Ստացված տոկոսային եկամուտ		1,383	47,967
		3,329	4,500
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(22,726)	(7,403)
<u>Ֆինանսական գործունեություն</u>			
Բաժնետիրական կապիտալի թողարկում		30,000	90,000
Փոխառությունների ստացում (վերադարձ)		(20,473)	245,515
Վճարված տոկոսներ		(6,743)	(2,843)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		2,784	332,672
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		(84,926)	286,007
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(224)	1,031
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ		294,943	7,905
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	14	209,793	294,943

Սևազ Քազանջյան, գործադիր տնօրեն

Վահե Հակոբջանյան, գլխավոր հաշվապահ



ՄոբիԴրամ ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Բաժնեմասային կապիտալ	Էրացուցիչ կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
31 դեկտեմբերի 2012թ.	190,000	22,282	(77,370)	134,912
<i>Տարվա համապարփակ եկամուտ</i>				
Տարվա վնաս	-	-	(98,644)	(98,644)
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-	<i>(98,644)</i>	<i>(98,644)</i>
<i>Գործարքներ մասնակիցների հետ</i>				
Թողարկված բաժնեմասային կապիտալ	193,000	-	-	193,000
Փոխառության զեղչում	-	34,065	-	34,065
<i>Ջեղչմանը վերաբերող շահութահարկ</i>	-	<i>(6,813)</i>	-	<i>(6,813)</i>
<i>Ընդամենը գործարքներ մասնակիցների հետ</i>	<i>193,000</i>	<i>27,252</i>	-	<i>220,252</i>
31 դեկտեմբերի 2013թ.	383,000	49,534	(176,014)	256,520
31 դեկտեմբերի 2011թ.	100,000	-	(6,594)	93,406
<i>Տարվա համապարփակ եկամուտ</i>				
Տարվա վնաս	-	-	(70,776)	(70,776)
<i>Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք</i>	-	-	<i>(70,776)</i>	<i>(70,776)</i>
<i>Գործարքներ մասնակիցների հետ</i>				
Թողարկված բաժնեմասային կապիտալ	90,000	-	-	90,000
Փոխառության զեղչում	-	27,853	-	27,853
<i>Ջեղչմանը վերաբերող շահութահարկ</i>	-	<i>(5,571)</i>	-	<i>(5,571)</i>
<i>Ընդամենը գործարքներ մասնակիցների հետ</i>	<i>90,000</i>	<i>22,282</i>	-	<i>112,282</i>
31 դեկտեմբերի 2012թ.	190,000	22,282	(77,370)	134,912